ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2011 թվականի հունիսի 23-ին, ՀՕ-247-Ն

«ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 2. Անցումային դրույթներ

~~8. Ֆիզիկական և իրավաբանական անձանց անվանափոխման վերաբերյալ գրառումներ կատարելու հիմքով, ինչպես նաև անշարժ գույքի նոր հասցեների կամ հասցեների փոփոխության գրանցման հիմքով նոր վկայականներ տրամադրելու պահանջը տարածվում է սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո գրանցված իրավունքների գրանցման տվյալներում համապատասխան փոփոխություններ կամ հասցեների գրանցում կատարելու դեպքերի վրա:~~

~~9. Մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության 1999 թվականի ապրիլի 14-ի ՀՕ-295 օրենքի 16-րդ հոդվածով սահմանված գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանի գրանցման թերթիկներում գրանցված իրավունքների գրանցման տվյալներում անվանափոխման վերաբերյալ գրառումներ կատարելու կամ նոր հասցե (հասցեի փոփոխություն) գրանցելու դեպքում դիմողի ընտրությամբ, նոր վկայականի տրամադրման փոխարեն, դիմողի ներկայացրած գրանցման վկայականում կարող են կատարվել համապատասխան փոփոխություններ, որոնց իրականացման հետ կապված գործավարության առանձնահատկությունները սահմանում է անշարժ գույքի պետական ռեգիստրի ղեկավարը:~~